«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Ներառական կրթության խոչընդոտները և հաղթահարման ռազմավարությունները

ԱՌԱՐԿԱ՝

դասվար

ՀԵՂԻՆԱԿ

25 Գուլանյան Նաիրա -

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց

Նպատակ

Բարձրացնել ***ուսումնական գործընթացի որակն ու արդյունավետությունը ներառման համատեքստում***

Խնդիրներ

Բացահայտել կրթության մարտահրավերները ներառական կրթության համատեքստում

Ուսումնասիրել կրթության կազմակերպման ներառական ռազմավարությունները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն

2.Կրթության մարտահրավերները ներառման համատեքստում

3.Կրթության կազմակերպման ներառական ռազմավարություններ

4.Ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության դերը երեխայի կրթության կազմակերպման գործընթացում

5.Եզրակացություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոր երեխաները ՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք

(Ցունիսեֆ,2017)

Ներառումը մտածելակերպ է:Այն սկսվում և կայանում է նախ մեր մտածողության , համոզմունքների և արժեքների մեջ և նոր միայն քաղաքականության մեջ և պրակտիկայում:Ներառել չի նշանակում աշակերտին բերել մի միջավայր , այլ առաջին հերթին փոփոխել ռեսուրսները և ստեղծել համընդհանուր միջավայր բոլորի համար:

Այսօր ներառումը մեծ թափով մտել է նաև կրթական համակարգ՝ իր հետ բերելով մի շարք դժվարություններ ու խոչընդոտներ:

Ես փորձեցի, իմ մանկավարժական գործունեության փորձից ելնելով,ուսումնասիրել բարձրացնել կրթության մարտահրավերները ներառման համատեքստում,բացահայտել կրթության կազմակերպման ներառական ռազմավարությունները և ուսուցիր-ծնող-մասնագետ համագործակցության նշանակությունը կրթության կազմակերպման գործընթացում:

ԳԼՈՒԽ 1

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՈՎՈՐԵԼ,ՊԱՐԶԱՊԵՍ Ո՛Չ ՆՈՒՅՆ ՕՐԸ և Ո՛Չ ՆՈՒՅՆ ԿԵՐՊ

Ներառական կրթությունը ենթադրում է ,որ բոլոր աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորեն կողք կողքի նույն դպրոցում և դասարանում:

Ներառել նշանակում է համապատասխանեցնել ուսուցումը յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքներին:

Ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ:Դա կրթութան հատկանիշ է,որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան կրթության իրականացում:Որքան ավելի շատ է դպրոցում ստեղծված կրթական միջավայրը նպաստում յուրաքանչյուր երեայի կրթության կարիքի արձագանքմանը՝ անկախ նրանից թե այդ կարիքն ինչպիսի առանձնահատկությունների վրա է հիմնված,այնքան դպրոցն ավելի ներառական է:

Կրթության գործընթացում երեխայի առավելագույն մասնակցությունն ապահովելու նպատակով կատարվել են անհրաժեշտ մեթոդական, ծրագրային և միջավայրային փոփոխություններ և հարմարեցումներ՝ կրթության առանձնահատուկ պայմաններ:Չնայած այս ամենին,պետք է նշել,որ ներառական դասարաններում աշխատելիս ուսուցիչները բախվում են տեսության և պրակտիկայի անհամատեղելիության տարաբնույթ

դրսևորումների և խոչընդոտների:Այսինքն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային միայն դպրոց բերելով չէ որ լուծվում է ներառման խնդիրը:Եթե երեխան դպրոցում ունի տեղաշարժման խնդիր, եթե չկան նրանց ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված հարմարեցումներ ,ապա չի կարող լինել արդյունավետ կրթություն: (**Մասլոյի բուրգ՝ ֆիզիոլոգիական կարիքների հոգում**)

Ներառական կրթությունը ենթադրում է կրթության մատչելիություն կամ արդարություն բոլոր երեխաների համար:

Ներառական կրթությունը ենթադրում է հավասարություն կրթական գործընթացում:Այսինքն կիրառվող մեթոդներն ու մոտեցումները պետք է հասանելի և արդյունավետ լինեն բոլոր սովորողների համար:

Ներառական կրթությունը ենթադրում է սովորողների ծնողների, ուսուցիչների, հոգեբանների,լոգոպեդների և այլ հատուկ մասնագետների սերտ համագործակցություն:

Այսպիսով՝

ներառում է՝

- յուրաքանչյուր աշակերտ համարվում է դպրոցական համայնքի ցանկալի անդամ
- հաշմանդամություն ունեցող սովորողները ընդգրկված են հանրակրթական դպրոցում
- հաշմանդամություն ունեցող սովորողներին տրամադրվում է հատուկ աջակցություն եւսումնառության ընթացքում
- յուրաքանչյուր սովորող ստանում է կրթություն,որը բավարարում է նրա անհատական կարիքները
- դպրոցի անձնակազմն աջակցում է հանագործակցային ուսուցման գործընթացին

ներառում չէ՝

- հաշմանդամություն ունեցող աշակերտին դպրոց ընդունել առանց նախօրոք մանրակրկիտ պլանավորման և համապատասխան աջակցության ապահովման
- ուսուցիչները զգալի ժամանակ են ծախսում հաշնանդամություն ունեցող աշակերտի ուսուցման կամ ուսումնական պլանի հարմարեցման վրա
- վտանգվում է մյուս սովորողների առաջընթացը դանդաղ ուսումնական գործընթացի պատճառով
- հաշմանդամություն ունեցող աշակերտների ֆիզիկական կամ ակադեմիական մեկուսացում ընդհանուր դասարաններում

  Յամընդհանուր ներառական կրթության անցնել նշանակում է ամբողջ կրթական համակարգը վերափոխել,այսինքն ուսծրագրերը դարձնել բաց և ճկուն, ունենալ դասավանդման ժամանակակից միջոցներ և

տեխնոլոգիաներ, ունենալ վերապատրաստված ուսուցիչներ, հարմարեցված միջավայր:

Այդուհանդերձ կրթական համակարգում առկա են մի շարք բացթողումներ և խնդիրներ,որոնք անդրադառնում են ներառական կրթության որակի վրա,երբեմն այն դարձնելով ձևական:Ներառումն իր հետ կրթական ոլորտ բերեց մի շարք մարտահրավերներ,որոնց հետ բախվում են դպրոցներն ու ուսուցիչները:Ստորև ներկայացնեմ դրանցից միքանիսը ե դրանց հաղթահարման ուղիները:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ 1. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Քանի որ ՀՀ-ում գրեթե բոլոր ուսումնական հաստատությունների շենքերը կառուցված են խորհրդային տարիներից՝ համընդհանուր մոտեցում կիրառված չեն:Բազմաթիվ դպրոցների ոչ համապատասխան դասասենյակները,սանհանգույցները,ճաշարանները,մարզադահլիճները,դպրոցական գույքը դժվարացնում կամ խոչընդոտում են ԿԱՊԿՈՒ երեխայի ազատ ներառմանը:Օրինակ,եթե դպրոցը չունի վերելակ,թեք հարթակներ աստիճանների մոտ,ապա հենաշարժողական խնդիր ունեցող երեխայի համար լուրջ խնդիր է դառնում անգամ դասասենյակ հասնելը:Ստիպված տեղաշարժման ամբողջ ծանրությունն իր վերցնում ծնողը՝ երեխայի հետ իր օրն անցկացնելով դպրոցում:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Պահպանելով քաղաքաշինության համար սահմանված նորմերը՝ իրականացնել վերանորոգում կամ վերակառուցում շինարարական նորագույն տեխնոլոգիաներով:Շարժողական խնդիրներ ունեցող երեխաների տեղաշարժը հեշտացնելու համար ընտրել դասասենյակ առաջին հարկում,ըստ անհրաժեշտության դասասենյակում տեղափոխել նստարանները, կատարել որոշ հարմարեցումներ :Ցանկացած ձևափոխված կամ հարմարեցված սարք կամ աջակցող տեխնոլոգիա կլրացնի ֆիզիկական միջավայրը:Աջակցող տեխնոլոգիա կարող են դառնալ սահիկային բացվող դռները,դռան

հարմարեցված բռնակները, վերելակները,հաղորդակցման տախտակները, էլեկտրոնային սարքերը, աուդիո և վիդեո սարքերը,որոնք օգտագործվում են բանավոր կամ գրավոր խոսքը լրացնելու կամ փոխարինելու համար:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ 2.ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Հաճախ հասարակության վերաբերմունքը մարդկային բազմազանության նկատմամբ հանգեցնում են խտրականության ,իսկ ներառական կրթության գաղափարների շուրջ ուսուցիչների ծնողների և երեխաների մոտեցումների տարբերությունները դառնում են կոնֆլիկտների պատճառ:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Անհրաժեշտ է նպաստել հանդուրժողականության և փոխըմբռնման ընդհանուր վերաբերմունքի ձևավորմանը:Բոլորս էլ գիտենք ,որ հասարակության մեջ միշտ եղել է կարծրատիպ,որ հաշմանդամություն ունեցող մարդիկ միշտ թույլ են և ինքնուրույն ոչնչի հասնել չեն կարող:Բայց չէ որ կյանքում կան շատ օրինակներ երբ նման մարդիկ կարողացել են հասնել մեծ բարձունքների և լինել հասարակության լիարժեք անդամ:Այդպիսի օրինակների մասին պետք է ուսուցիչը պատմի դասարանում: Շատ կարևոր է դրական մթնոլորտի ստեղծումը՝ուշադրություն, հոգատարություն, հանդուրժողականություն:Բայց դա չի նշանակում ,որ դասարանու հատուկ կարիք ունեցողները պետք է հայտնվեն անհարկի ուշադրության կենտրոնում:Դրանից նրանք իրենց ավելի վատ կզգան:Նրանց պետք է վերաբերվոլ ոչ թե որպես հաշմանդամութուն ունեցող անհատների ,այլ մարդ՝ով կարող է օգնության կարիք ունենալ:Չէ՞ որ օգնության կարիք կարող է ունենալ ցանկացած մարդ՝ մեծից փոքր:Ուսուցիչը պետք է դառնա առաջին օրինակը,ով իր վերաբերմունքով կապացուցի,որ դաղարանումբոլորն էլ ունակ և կարող սովորողներ են, ովքեր երբեմն-երբեմն օգնության կարիք ունեն:Միայն թե այդ օգնությունը մեկին մի

քիչ շատ է պետք, իսկ մյուսին ՝ քիչ:Շատ կարևոր է օգնությունը ճիշտ ձևով կազմակերպելը:

Օրինակ՝

_Երեխանե՛ր,□-ը դպրոցում տեղաշարժվելիս երբեմն մեր օգնության կարիքը կզգա:

Ոչ թե՝

Երեխանե՛ր,□-ը հաշմանդամ է և տեղաշարժվելիս նրան պետք է օգնել:

Կամ՝

_Թույլ կտա՞ս քեզ օգնել, միասին ավելի արագ կվերջացնենք:

Ոչ թե՝

_Դու մենակ չես կարող,ես քեզ կօգնեմ:

Նման մթնոլորտում , որտեղ բոլոր սովորողները զգում են իրենց կարևորությունը, ոչ միայն սովորելն է դառնում հաճելի,այլ նաե ձևավորվում է մշակույթ,ինչը դպրոցից կարող է տեղափոխվել ընտանիք և հասարակություն:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ 3.ՄԵԹՈԴԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսումնական հաստատություններում կրթության կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքային նյութերը (մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, դիդակտիկ նյութեր, տեսաֆիլմեր, ուսումնական խաղեր և այլն) բավարար չեն արդյունավետ կրթություն իրականացնելու համար:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Դպրոցը պետք է շարունակ լրացնի ռեսուրսները:Դպրոցական գրադարանը պետք է անընդհատ համալրվի նոր մեթոդական ուղեցույց-ձեռնարկներով::Պետք է նաև ունենալ ժամանակակակից դիդակտիկ նյութեր

և պարագաներ, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներով:Բոլոր այս ռեսուրսներից ազատ օգտվելու հնարավորություն պետք է ունենան բոլորը՝ ծնող, ուսուցիչ, սովորող:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ 4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Ոչ ճկուն ուսումնական ծրագրերը չեն բավարարում սովորողների անհատական կարիքները, ինչն էլ խոչընդոտում է ուսուցման գործընթացին:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Անհրաժեշտ է վերանայել ուսումնական ծրագրերը՝ դարձնելով դրանք բաց և ճկուն:Ուսուցման ծրագրի հարմարեցումը չի նշանակում թեթևացնել ծրագիրը,այլ հակառակը կարողանալ բոլորին հասցնել համապատասխան մակարդակի:Ճկուն ծրագիր ասելով նկատի ունենք ծրագրի աշակերտների կարիքներին հարմարեցնելը, անհրաժեշտության դեպքում անհատական կրթական նպատակներ սահմանելը և այդ նպատակներին հասնելու համար համապատասխան արդյունավետ ուղիների և ժամանակակից մեթոդների մշակումը:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ 5. ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Արդյունավետ ուսումնական գործընթաց իրականացնելու համար ուսուցիչը պետք է նախօրոք պլանավորի իր աշխատանքը , մշակի օրվա թեմային համապատասխան դասի պլան , կազմի լրացուցիչ աշխատանքային նյութեր՝անհատական մոտեցում ապահովելու համար, լրացնի համապասխան փաստաթղթեր:

Ուսուցչի աշխատանքային ժամանակը չի բաբարարում այս ամենը իրականացնելու համար:

ՀԱՂԹԱՀԱՐՄԱ ՈՒՂԻՆԵՐ

Համընդհանուր ներառման շրջանակում հանրակրթական դպրոցներում ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը:Ուսուցչի օգնականն օժանդակում է ուսուցչին բոլոր ,այդ թվում ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության համար անհրաժեշտ ուսումնական նյութերի պատրաստման գործընթացում՝ դրանով իսկ խնայելով ուս ուսուցչի ժամանակը:

ԳԼՈՒԽ 2

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ տեսնենք,թե որոնք են կրթության առանձնահատուկ պայմանները,որոնք են տարբեր խնդիրների դեպքում նախազգուշացնող ազդանշանները և տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ արդյունավետ աշխատանք կազմակերպելու ռազմավարությունները:

Խնդիրներ

1. Խոսքի և հաղորդակցման խանգարումներ
2. Գրի և ընթերցանության խանգարումներ
3. Լսողության խանգարումներ
4. Տեսողության խանգարումներ
5. Մտավոր կամ ճանաչողական գործընթացների խանգարումներ

Թվարկած խնդիրների ու դրանց հաղթահարման ռազմավարությունների մասին հանգամանալից կարելի է ծանոթանալ**«Ինչպես խթանել ներառումը դասարանում» մեթոդական ուղեցույց ձեռնարկում(Ձեռնարկ-եր.:Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.2021.-236 էջ):**Ես կներկայացնեմ իմ աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպած խնդի՝ խոսքի և շարժունակության մասին,քանի որ աշխատել եմ այդպիսի խնդիր ունեցող սովորողի հետ:

ԱՐԹՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Արթուրն ուներ հենաշարժողական և խոսքի խնդիր:Նա դպրոց էր գալիս իր մայրիկի ու եղբոր օգնությամբ:Ձեռքերում ու ոտքերում մկանային լարվածության պատճառով դժվարությամբ էր քայլում:Դպրոցում խուսափում էր ընկերների հետ շփվելուց ,քանի որ արտաբերում էր ոչ ամբողջական բառեր և կաշկանդվում էր խոսելիս:Դժվարությամբ էր կենտրոնանում:

Տնօրենի հետ խորհրդակցելով դասասենյակը երկրորդ հարկից իջեցրինք առաջին հարկ:

Հաջորդ քայլը վերաբերմունքի խոչընդոտի հաղթահարումն էր:

Արթուրը մեկուսացած էր:Դասերի ընթացքում գլուխը հենում էր ձեռքերին ու անտարբեր նայում մի կետի:Դաղամիջոցներին հենվում էր պատին ու հեռվից հետեում էր իր ընկերների աշխույժ խաղին:Երբ փորձում էի ներգրավել ժպտում էր ու գլխով հրաժարվում՝ թաքուն նայելով ընկերների կողմը:Պարզ էր,որ ընկերների աջակցությանն էր սպասում:Օգտվելով հարմար պահից,երբ Արթուրը դպրոցում չէր,դասղեկի ժամի թեման վերափոխեցի «Հանդուրժողականություն » թեմայի:Աշակերտներիս պատմեցի հաշմանդամություն ունեցող 10 հայտնիների մասին,ովքեր՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ ,իրենց հարազատների հոգատարության ու աջակցության շնորհիվ հասել են մեծ բարձունքների:Վերջում հաչց ուղղեցի աշակերտներին.

_Երեխանե՛ր, իսկ մեր կողքին կա՞ մարդ ով ունի աջակցության ,ուշադրության,հոգատարության կարիք:Մենք ունե՞նք հնարավորություն ապացուցելու,որ մենք էլ կարող ենք օգնել, աջակցել ,լինել ուշադիր ու հոգատար:

Աշակերտներս լուռ էին:

Այդ զրույցը տվեց իր արդյունքը:Վերաբերմունքի խոչընդոտն հաղթահարված էր:

Արթուրի հետ աշխատելիս մշտապես կապ էի պահպանում ծնողի հետ ՝ նրա նախասիրությունները հասկանալու համար :Քանի որ ձեռքերի մկանների լարվածությունը խանգարում էր Արթուրին գրելիս,հատուկ մանկավարժի խորհրդով սկսեցի կիրառել Դեյվիսի մեթոդը՝1-10 թվերը մտապահելու համար:Արթուրը սիրով աշխատում էր ծեփոնով:Նախ պատկերում էր թիվը ,հետո փորձում էինք գրել:Դասընկերներ ծափահարում ու գովում էին Արթուրի ամեն չնչին հաջողություն:Տառերը մտապահելու համար օգտվում էինք և՛ ծեփոնից ,և՛ նկարներից:

Ուսումնական տարվա ավարտին արձանագրեցինք,որ Արթուրը ճանաչում է 1-10 թվերը, նկարների օգնությամբ ճանաչում է այբուբենի տառերը:

Ձեռքբերումը քիչ էր,բայց ակնառու:

ԳԼՈՒԽ 3

ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ- ՄԱՍՆԱԳԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Այսօր դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացում մեծ է ծնողի ներգրավվածությունը:Հատկանշական է ,որ դպրոցական կյանքում ծագող խնդիջների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմու ընտանեկան միջավայրում ձոռք բերված սոցիալական դիրքորոշումները,որոնք նպաստում կամ խանգարում են դժվարությունների դրսևորմամը,այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում եղել և մնում է միշտ արդիական :

Երբ ծնողի ներգրավվածությունը երեխայի կրթության կազմակերպման գործընացեում նվազում է, ընտանիքը դուրս է մղվուն երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքներից և դառնում է միայն մասնագիտական կարծիք լսող:

Այս խնդիրնորի հքղթահարման միակ ճանապարհը ընտանիք դպրոց կապի զարգաղումն է:

Ըստ Մ. Երմոլովայի հետազոտութնքլնների երբ ծնողներն ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից են , երոխան դպրոցում ունենում է բարձր առաջադիմություն ,դրական վարք, հարգալից է դասընկերների ,դպրդցի և ուսուցիչների հանդեպ:

Ընտանիքի և դպրոցի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություննոր երեխայի կրթական գործընթացում:

Ուսուցիչ –ծնող—մասնագետ համագործակցության նպատակն է խրախուսել կայուն ,շարունակական և արդյունավետ գործունեություն Ն բոլոր անդամների միջև:

Յամագործակցությունն արդյունավետ դաձնելու համար անհրաժեշտ է պահպանել հետևյալ

Սկզբունքները՝

1.**Վստահություն**

Ծնողների և ուսուցիչների արդյունավետ շփումը սկսվում է վստահությունից :Ծնողն ու ուսուցիչը պետք է վստահեն միմյանց:Ծնողի պատմած կամ ցանկացրած տեղեկություն պետք է մնա գաղտնի:

2.Կապը ընտանիքի հետ

Երկկողմանի կապը հնարավորություն է տալիս ուսուցչին ավելի լավ ճանաչել իր աշակերտներին և նրանց ընտանիքներին, ինչը շատ կարևոր է ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար:

3.Համագործակցություն

Պետք է հիշել, որ բոլոր ընտանիքները տարբեր են և գործընկերային գարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:Ցանկացած առաջացած խբդիր կամ դժվարություն պետք է քննարկել ծնողների հետ:

4.Ընդհանուր պատասխանատվություն

Տանը և դպրոցում առաջացած խնդիրների լուծման ժամանակ պատասխանատվությունը ծնողը և ուսուցիչը կիսում են հավասարապես:Միմյանց մեղադրելու փոխարեն անհրաժեշտ է հասկանալ խնդրի պատճառը և ձգտել միասին հաղթահարել այդ դժվարությունը:

5.Ջերմ հարաբերություններ

Ծնող-ուսուցիչ հարաբերությունները միշտ պետք է լինեն ջերմ ու բարիդրացիական:Ցանկացած իրավիճակում պետք է մեղազրանքներ հնչեցնելու փոխարեն լինել աջակից և պատրաստակամ խնդիրների ու դժվարությունների հաղթահարման ժամանակ:

6.Խթանել և քաջալերել

Ուսուցումն արդյունավետ դարձնելու համար երբեմն ականջալուր պետք է լինել ծնողների առաջարկներին, լսել նրանց հաջողությունների մասին,որպեսզի ծնողը նույնպես իրեն արժեքավոր զգա:

Սովորողի կրթական և զարգացման հաջողությունների արձանագրման վրա իրենց անմիջական դերն ու ազդեցությունն ունեն մանկավարժների և ընտանիքի համագործակցությունը:Ուստի ծնող-դպրոց կապը պետք է լինի ինտենսիվ, շարունակական ,նպատակային և առողջ մթնոլորտում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության գործընթացում ներառումն այլևս անբաժանելի բաղադրիչ է:Ներառումը մտածելակերպ է,որը պետք է սկսվի ու կայանա մեր մտածողության,համոզմունքների և արժեքների մեջ:Ներառումը սեր է,ցանկություն ու ջանք:Ոչինչ հեշտ չի տրվում:Ներառումն էլ իր բերում է դժվարություններ ,որոնք հաղթահարելու համար անհրաժեշտ է համագործակցային ,թիմային աշխատանք և իհարկե ցանկություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ինչպես խթանել ներառումը դասարանում»մեթոդական ուղեցույց- ձեռնարկ

(Ձեռնարկ-Եր.:Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.2021, 236 էջ)

«Ներառական կրթության ռազմավարությունները»
(Մինեսոթայի համալսարան,ԱՄՆ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակ)